

READING ROOM
DEPT. OF LINGUISTICS

PORTA LINGUARUM ORIENTALIUM

EDITIT

J. H. PETERMANN.

TOMUS VI.

BREVIS

LINGVAE ARMENIACAE

GRAMMATICA, LITTERATURA, CHRESTOMATHIA

CUM

GLOSSARIO.

IN USUM PRAELECTIONUM ET STUDIORUM
PRIVATORUM

SCRIPSIT

JUL. HENR. PETERMANN,

IN UNIVERSIT. BELOLINENSI

READING ROOM

DEPT. OF LINGUISTICS

CAROLSRUHAE ET LIPSIAE.

H. REUTHER.

TETIAE PARISIORUM

LONDINII

(SONNEUVE & CIE.

DULAU & Co.

25, QUAI VOLTAIRE.

37, SOHO SQUARE.

1872.

PK
8023
P5
1872
c.1
ROBARTS

Calvini Joh., in Novi Testamenti epistolas Commentarii, ad editionem Amstelodamensem accuratissime exscribi curavit A. Tholuck 8^o. Ed. quarta. 4 Bände. M. 13. 50.

— Epistolae Pauli ad Romanos et Corinthos. Ed. quarta. 2 Bände. M. 5. —.

Genesis, Psalmi, Jesaias, Jobus, hebraice ad optimas editiones accuratissime exscripti. In usum praelectionum academi- carum. 4 Bändchen, kart., die drei ersten M. 1. 25, Jobus 75 Pf.

Vitae quatuor reformationum Lutheri a Melanchthone, Melanch- thonis a Camerario, Zwinglii a Myconio, Calvini a Theod. Beza conscriptae nunc junctim editae. Praefatus est A. F. Neander. 8^o. Halbranzband. M. 2. 50.

Weis H., Dr., Die grossen Kappadocier Basilius, Gregor von Nazianz und Gregor von Nissa als Exegeten. Ein Beitrag zur Geschichte der Exegese. 8^o. M. 1. 80.

Rutherford Sam., Geistliche Trostbriefe, nebst kurzem Abriß seines Lebens. Aus dem Englischen. Mit empfehlendem Vorwort von Dr. theol. Rud. Kögel. 2. Auflage. M. 3.—, eleg. geb. M. 3. 60.

Kinder- und Katechismus-Predigten. Erbauliche Auslegung des christlichen Glaubens nach der Ordnung des luther. Katechismus. Im Jahre 1540 auf Befehl des Churfürsten Joachim II. von Brandenburg verfaßt. kart. M. 1. —.

Schults H., Dr. Prof. Die Stellung des christlichen Glaubens zur heiligen Schrift. Zwei apologetische Vorträge. 2. erweiterte und mit Anmerkungen versehene Auflage. gr. 8^o. M. 1. 50.

Kneucker J. J., Die Anfänge des römischen Christenthums. Ein Vortrag. Mit erläuternden Anmerkungen versehen. gr. 8^o. M. —. 50.

Laurier F. W., Die geschichtliche Nothwendigkeit des Christen- thums. Ein Vortrag für Gebildete. gr. 8^o. M. 1. 20.

Rohde F. Dr., Sinneswahrnehmungen und Sinnestäuschungen. Vortrag. gr. 8^o. M. 1. —.

Bartels F. Dr., Auswahl deutscher Gedichte von Haller bis auf die neueste Zeit. Mit sachlichen und sprachlichen Erläuterungen für den Schulgebrauch herausgegeben. M. 2. 40.

Säger A., Der menschliche Körper, sein Bau, seine Lebensvorrichtungen und seine Pflege. Mit 30 Holzschnitten. M. 1. —.

PORTA
LINGUARUM ORIENTALIUM

SIVE

ELEMENTA LINGUARUM

- | | |
|------------------|------------------|
| I. HEBRAICAE | V. SYRIACAE |
| II. CHALDAICAE | VI. ARMENIACAE |
| III. SAMARITANAE | VII. AETHIOPICAE |
| IV. ARABICAE | VIII. PERSICAE. |

STUDIIS ACADEMICIS ACCOMMODATA.

EDIDIT

J. H. PETERMANN, E. NESTLE, S. LANDAUER F. A.

PARS VI.

LINGUA ARMENIACA.

EDITIO SECUNDA EMENDATA.

CAROLSRUHAE ET LIPSLAE.

H. REUTHER.

LUTETIAE PARISIORUM
MAISONNEUVE & C^IE.

25, QUAI VOLTAIRE.

LONDINII
D U L A U & C O.

37, SOHO SQUARE.

1872.

BREVIS
LINGVAE ARMENIACAE

GRAMMATICA, LITTERATURA, CHRESTOMATHIA

CUM

GLOSSARIO.

IN USUM PRAELECTIONUM ET STUDIORUM
PRIVATORUM

SCRIPSIT

JUL. HENR. PETERMANN,

DOCT. ET PROF. PUBL. EXTRAORD. IN UNIVERSITATE BEROLINENSI.

EDITIO SECUNDA EMENDATA.

CAROLSRUHAE ET LIPSIAE.

H. REUTHER.


LUTETIAE PARISIORUM
MAISONNEUVE & CIE.

25, QUAI VOLTAIRE.

LONDINI
D U L A U & C O.

37. SOHO SQUARE.

1872.



Typis Guilielmi Drugulini Lipsiensis.

INCLYTAE
MECHITARISTARUM

ACADEMIAE IN INSULA SANCTI LAZARI

HANC NOVAM EDITIONEM LIBELLI

STUDIIS

LINGVAE ET LITTERATURAE ARMENIORUM DICATI

PIO GRATOQUE ANIMO

D. D. D.

AUCTOR



PRAEFATIO.

Trado hic sextam portae linguarum orientalium partem in qua idem consilium, quod in praecedentibus persequutus sum, firmiter tenui. Dedi igitur, quantum ei, qui vel proprio Marte linguam Armeniorum ediscere cupiat, sufficere putavi, ut his studiose perlectis sine magna difficultate ad alia legenda pergere possit; simulque iis satisfacere studui, qui lectiones de hac lingua et litteratura habere velint, ut libellum habeant, quem discipulorum manibus tradere, et quo tanquam duce in scholis suis commode uti possint. — Sed in grammatica, quum haec lingua ab iis, quae semiticae dicuntur, maximopere discedat, aliam viam ingressus sum, talem nempe, qualem in caeteris linguis observamus, quamque in libro meo: „Grammatica linguae Armeniaca. Berolini 1837. 8. ap. G. Eichler“ jam antea inieram; atque hunc quidem librum mihi ducem sumsi, ita ut mutatis mutandis, atque omissis iis, quae sive explicationem formarum, sive comparisonem cum aliis linguis spectant, illius fere epitomen conscripserim. — Pro specimine lectionis et analyseos item ut alibi orationem dominicam proponere non dubitavi, quoniam versio Script. Sacrae armeniaca saeculo quinto, aurea litteraturae Armeniorum aetate facta est et classicis, quae dicunt, scriptis omni jure adnumeratur. — In litteratura libros. qui facile

comparari nequeunt, omisi. — In chrestomathia denique praemissis quatuor prioribus Geneseos capitibus, quae, quum textum graecum verbotenus fere reddant, difficultatem haud praebent, singula loca e variis variorum temporum scriptoribus eo respectu decerpsi, ut tirones in variis dicendi generibus sese exercere possint, simulque varietate rerum allecti a facilibus ad difficiliora pergant. Itaque primo loco posui vitam primi Armeniorum herois post Haik, Arami scilicet, unde nomen populi exortum putatur, eamque secundum narrationem celeberrimi Tschamtschean (in *Compend. histor. Arm. Venet* 1811. 8. p. 9. sqq.), qui simplici et facili dicendi genere usus est; huic adjunxi ea, quae Eznik. elegantissimus scriptor saeculi quinti p. Chr., de Marcione ejusque secta profert: deinde e classica illa Elisei, aequalis Eznikii, historia de iis, quae Armenios inter et Persas anno 449 sqq. p. Chr. gesta sunt, epistolam dedi, qua Persarum princeps Mihrnerseh Armenios ad ipsius fidem amplectendam persuadere conatur; porro e Mose Chorenensi caput de Haiko, regni Armeniaci conditore, descripsi; tum pulcherrimam narrationem de morte voluntaria Arsacis II., qui annis 363—81 p. Chr. regnum Armeniorum tenuit, secundum Faustum Byzantinum, scriptorem saeculi quarti, attuli, ut lectores ejus stilum non optimae quidem notae cum aliis comparare possint; deinde locum proposui ex Joanne Mandacunensi, scriptore saeculi quinti, quem tirones velim statim post illa Geneseos capita perlegant, sed argumenti ratione ductus hic demum inserui; ac finem denique facit Gregorii

Narekensis introductio atque initium Commentarii in Canticum Canticorum, auctoris saeculi X. alias intellectu difficillimi, sed in hoc libello, quem juvenili aetate scripsit, satis facili. — In glossario, quantum fieri potuit, etymologiam non minus quam alphabeticum ordinem observavi.

PRAEFATIO

ad secundam editionem,

In altera hac editione pauca tantum habeo, quae praemonenda duxerim. Litterarum in tabula Armeniorum orientalium prononciationem, quam in plurimis primitivam esse censeo, addidi, et in litteratura librorum ab illo inde tempore, quo prior editio lucem vidit, impressorum titulos adjeci. Praeterea menda quidem typographica, quantum potui, correxi. sed doleo, quod, licet omnem curam ac diligentiam adhibuerim, nonnulla tamen in textum irrepererint, quae lectores velim ante lectionem libelli corrigant.

In Grammatica:

- Pag. 3. l. 18. l. „hominum“ pro „homnium“.
 Pag. 9. l. 5. l. „abjiciunt“ pro „adjiciunt.“
 Pag. 10. l. 3. l. շ pro զ.
 Ibid. l. 21 l. „auxiliarem“ pro „anxiliarem.“
 Pag. 44. l. 24. l. հւթամբք pro ութամբք.
 Pag. 47. l. 12. l. Հնդեառաւի pro Հնդեառաւի.
 Pag. 48. l. 28. l. „conjuncta“ pro „conjuncta.“

- Pag. 54. l. 14. l. ձեղ pro ձեղ.
 Pag. 67. l. ult. l. „Participium“ pro „Participuum.“
 Pag. 68. l. 12. l. „characterē“ pro „charatere.“
 Ibid. l. 25. l. „littera“ pro „litêera.“
 Pag. 74. l. 18. l. լինելի pro լնեելն.
 Pag. 75. l. 17. l. լի՛ք pro լի՛ր.
 Ibid. l. penult. l. լից՛ուք pro լից՛ուք et ult. լննիջի՛ք
 pro. լինիջի՛ք.

In Chrestomathia:

- Pag. 4. l. 14. l. եղ pro եգ.
 Pag. 5. l. 1. l. անձ pro ած.
 Ibid. l. 4. l. թռչունս pro թռչունս.
 Ibid. l. ult. l. անձ pro ած.
 Pag. 6. l. 22. l. աուրս pro տուրս.
 Pag. 7. l. 23. l. պողոյ pro պաղոյ.
 Pag. 9. l. 21. l. զնոյն pro զնոյն.
 Pag. 12. l. 24. l. ՂԱ՛րայ pro ՂԱ՛րայ, et նեխեցաւ pro
 նեխեցաւ.
 Pag. 18. l. 17. l. Որում pro Որուն, et յաւիտենից
 pro յաւտենից.
 Pag. 19. l. 2. l. յղացաւ pro յղացաւ.
 Pag. 21. l. 6. l. այդպիսի pro այդպիսի.
 Ibid. l. 21. l. խրոխտացեալ pro խրոխտացեալ.
 Pag. 22. l. 8. l. դադարեալ pro. գադարեալ.
 Pag. 24. l. 2. l. արքայն pro տրքայն.
 Ibid. l. 28. l. մարդ pro մարդ.
 Pag. 25. l. 26. l. եւ pro ե.
 Pag. 26. l. 12. l. լսւ pro լսւ.
 Pag. 27. l. 9. 10. l. որպէս pro որպէս.

- Ibid. l. 15. l. զմարդ pro զսարդ et l. 19. l. զնախանձ
pro զնախանձ.
Pag. 29. l. 7. l. տն pro տն et l. 16. l. այ pro այ.
Pag. 30. l. 7. l. ուր pro ուր et l. 10. l. սր pro սր.
Pag. 36. l. 8. l. անզինն pro տնզինն.

In Glossario.

- Pag. 38. col. 2. l. 7. l. „contra“ pro „contro.“
Pag. 39. col. 1. l. 3. l. նու pro նու.
Pag. 40. col. 1. l. 20. l. Մնառակ pro Մնարակ.
Pag. 41. col. 2. l. 28. l. լոյ pro լոյ,
Pag. 42. col. 2. inserendum vocabulum „Մարտամբու թիւն,
„defectus, rebellio.“
Pag. 43. col. 2. l. 22. l. Մտմ pro Մտմ.
Pag. 46. col. 1. l. 7. l. բազմապատիկ pro բազմապատիկ.
Ibid. col. 2. l. 2. l. բացից pro բացցեմ,
Pag. 49. col. 2. l. ult. l. „foedus“ pro „foedua.“
Pag. 50. col. 2. l. 10. l. զիւցազն pro զիւցազե.
Pag. 51. col. 1. l. 14. l. Ղողամ pro Ղողամ.
Pag. 56. col. 1. l. 21. l. էաք pro էակ.
Ibid. col. 2. l. 26. l. լարձք pro լորձք.
Pag. 57. col. 2. l. 28. l. „diffidentia“ pro „difidentia.“

Reliqua peccata, quae leviora puto, mihi, qui solus correctoris partibus fungi coactus eram, lectores benevole indulgeant. Scripsi.

BEROLINI

D. XXVII. OCT. MDCCCLXXI.

CHRESTOMATHIA.

QUATUOR PRIMA CAPITA GENESEOS.

CAPUT I.

1. Դ սկզբանէ արար աստուած զերկին և զերկիր:
2. Եւ երկիր է՛ր աներևոյթ և անպտորաստ. և խա-
ւա՛ր ՚ի վերայ անդնդոց. և հոգի աստուծոյ շրջէ՛ր ՚ի վե-
րայ ջուրց: 3. Եւ ասաց ան, եղեցի՛ Լոյս. և եղև՛ Լոյս:
4. և ետես ան զԼոյսն զի բարի՛ է: և մեկնեաց ան ՚ի
մէջ Լուսոյն և ՚ի մէջ խաւարին: 5. և կոչեաց ան
զԼոյսն տիւ, և զխաւարն կոչեաց զիշեր: և եղև երեկոյ՝
և եղև վաղորդայն՝ օ՛ր մի: 6. Եւ ասաց ան. եղեցի՛
հաստատութիւն ՚ի մէջ ջրոցդ, և եղեցի մեկնե՛լ ՚ի մէջ
ջուրցդ և ջուրց. և եղև այնպէս: 7. Եւ արար ան
զհաստատութիւնն, և անջրպետեաց ան ՚ի մէջ ջրոյն որ
՚ի ներքոյ հաստատութե՛ն, և ՚ի մէջ ջրոյն որ ՚ի վերոյ
հաստատութե՛ն: 8. և կոչեաց ան զհաստատուին եր-
կին. և ետես ան զի բարի է: և եղև երեկոյ, և եղև
վաղորդայն, օ՛ր երկրորդ: 9. Եւ ասաց ան. ժողովեա-
ցին ջուրքդ որ ՚ի ներքոյ երկնից ՚ի ժողով մի, և եր-
ևեցից ցամաքն. և եղև այնպէս: և ժողովեցան ջուրքն,
որ ՚ի ներքոյ երկնից ՚ի ժողովս իրեանոց. և եր-
ևեցաւ ցամաքն: 10. Եւ կոչեաց ան զցամաքն եր-
կիր. և զժողովս ջուրցն կոչեաց ծովս. և ետես ան զի

բարի է: 11. Աւ ասաց անձ. բղիսցե՛ք՝ երկիր բանջար խոտոյ, սերմանել սերմն ըստ ազգի և ըստ նմանութե. և ճառ պողաբեր՝ առնել պտուղ ըստ ազգի իւրում, որոյ սերմն իւր ՚ի նմին ըստ ազգի ՚ի նմանութի՛ն ՚ի վր՛ երկրի. և եղև այնպէս: 12. Աւ եհան երկիր բանջար խոտոյ, սերմանել սերմն սր է ՚ի վր՛ անձ երկրի. և փայտ պողաբեր առնել պտուղ՝ որոյ սերմն իւր ՚ի նմին ըստ ազգի ՚ի վերայ երկրի. և ետես անձ զի բարի է: 13. և եղև երեկոյ, և եղև վաղորդայն, օ՛ր երրորդ: 14. Աւ ասաց անձ՝ եղեցին լուսաւորք ՚ի հաստատութե՛ն երկնից, ՚ի լուսաւորուի՛ն ՚ի վր՛ երկրի, և մեկնե՛լ ՚ի մէջ տուրնջեան և ՚ի մէջ գիշերոյ. և եղեցին ՚ի նշանս, և ՚ի ժամանակս, և յաւուրս, և ՚ի տարիս: 15. և եղեցին ՚ի լուսաւորութի՛ն ՚ի հաստատութե՛ն երկնից ճագել յերկիր. և եղև այնպէս: 16. Աւ արար անձ զերկուս լուսաւորան զմեծամեծս. զլուսաւորն մեծ յիշխանութի՛ն տուրնջեան, և զլուսաւորն փոքր յիշխանութի՛ն գիշերոյ, և զաստեղս: 17. և ե՛ր զնոսա անձ ՚ի հաստատութե՛ն երկնից լուսատու լինել յերկիր: 18. և իշխել տուրնջեան և գիշերոյ, և մեկնել ՚ի մէջ լուսոյն և ՚ի մէջ խաւարին. և ետես անձ զի բարի է: 19. և եղև երեկոյ, և եղև վաղորդայն օ՛ր չորրորդ: 20. Աւ ասաց անձ. հանցե՛ն ջուրք զեռունս շնչոց կենդանեաց, և թռչունս թևաւորս ՚ի վր՛ երկրի ըստ հաստատութե՛ն երկնից. և ելև այնպէս: 21. Աւ արար անձ կէտս մեծամեծս, և զանձ շունչ զեռնոց կենդանեաց, զոր հանին ջուրք ըստ ազգի իւրեանց, և զանձ թռչունս թևաւորս ըստ ազգի, և ետես անձ զի բարի են: 22. Աւ օրհնեաց զնոսա անձ և ասէ. ա-

ճեցէ՛ք և բազմացարո՛ւք, և լցէ՛ք զջուրսդ որ 'ի ծովս.
և թռչունքդ բազմացի՛ն 'ի վր՛ երկրի: 23. և եղև
երեկոյ, և եղև վաղորդայն, օր Հինգերորդ: 24. Եւ
ասաց անձ. հանցէ՛ երկիր շունչ կենդանի ըստ ազգի չորք-
ոտանի, և սողունս, և զազանս երկրի ըստ ազգի. և
եղև այնպէս: 25. Եւ արար անձ գազալանս երկրի ըստ
ազգի, և զանասո՛ւնս ըստ ազգի, և զանձ սողունս երկրի
ըստ ազգի իւրեանց. և ետես անձ գլի բարի՛ են: 26. Եւ
ասաց անձ. արասցո՛ւք մարդ ըստ պատկերի մերում և ըստ
նմանութե՛. և իշխեսցեն ձկանց ծովու, և թռչնոց երկնից,
և անասնոց, և ամենայն երկրի, և ամենայն սողնոց որ սողին
'ի վերայ երկրի: 27. Եւ արար անձ զմարդն 'ի պատ-
կեր իւր. ըստ պատկերի անձ արար զնա. արու և էգ ա-
րար զնոսա: 28. Եւ օրհնեաց զնս՝ անձ՝ և ասէ. աճեցէ՛ք
և բազմացարո՛ւք՝ և լցէ՛ք զերկիր. և տիրեցէ՛ք դմա. և
իշխեցէ՛ք ձկանց ծովու, և թռչնոց երկնից, և անձ ան-
ասնոց, և անձ երկրի, և անձ սողնոց որ սողին 'ի վր՛ եր-
կրի: 29. Եւ ասաց անձ. ահաւազիկ հտո՛ւ ձեզ զանձ
խոտ սերմանելի՛ սերմանել սերմն ըստ ազգի և ըստ նմա-
նութե՛, որ է 'ի վերայ անձ երկրի. և անձ փայտ որ ունի-
ցի յինքեան պտուղ սերման սերմանելոյ, ձեզ լեցի 'ի
կերակուր: 30. և անձ գազանաց երկրի. և անձ թռչնոց
երկնից, և անձ սողնոց որ սողին 'ի վր՛ երկրի որ ունիցի
շունչ կենդանի. և անձ խոտ դալար 'ի կերակուր, և եղև
այնպէս: 31. Եւ ետես անձ զանձ զոր արար, և ահա
բարի են յոյժ: և եղև երեկոյ, և եղև վաղորդայն, օր
վեցերորդ:

CAPUT II.

1. Եւ կատարեցան երկինք և երկիր և անձ զարդ
նց: 2. և կատարեաց անձ յաւուրն վեցերորդի զանձ

զգործս իւր՝ զսր արար: Եւ հանգեալ յաւուրն եւթներ-
որդի յամ՝ զործոց իւրոց՝ զսր արար: 3. և օրհնեաց
անձ զօրն եւթներորդ, և սրբեաց շնա. զի ՚ի նմա՝ հան-
գեալ յամ՝ զործոց իւրոց՝ զսր սկսաւ առնել անձ: 4. Եւ յս
է զիւր արարածոց երկնի և երկրի, յաւուր յորում արար
անձ զերկինս և զերկիր: 5. և զամ բանջար վայրի մինչ-
չե՛ լեալ էր ՚ի վր՝ երկրի, և զամ խոտ վայրի մինչչե՛
բուսեալ էր, զի չե՛ ևս էր տեղացեալ անձն այ՝ ՚ի վր՝ եր-
կրի. և մարդ չէ՛ր՝ որ զործէր զերկիր: 6. Բայց աղ-
բիւր ելանէր յերկրէ՛ և ուռգանէր զամ երեսս երկրի:
7. Եւ ստեղծ ար անձ զմարդն հոգ յերկրէ. և փշեաց
յերեսս նր՝ շննչ կենդանի, և եղև մարդն յոգի կենդանի:
8. Եւ անկեաց անձ զգրախտն յեղեմ ընդ արևելս, և
եդ անդ զմարդն զոր ստեղծ: 9. Եւ բուսոյց ևս ար
անձ յերկրէ զամ ծառ գեղեցիկ ՚ի տեսանել, և քաղցր
՚ի կերակուր. և զծառն կենաց ՚ի միջ գրախտին, և
զծառն զիտելոյ զգիտութի՛ն բարւոյ և չարի: 10. Եւ
գե՛տ ելանէր յեղեմայ ուռգանել զգրախտն. և անտի բա-
ժանի ՚ի չորս առաջս: 11. Եւ նուն միումն փիտոջն. նա՛
է որ պատէ զամ երկիրն եւիլատայ, անդ ուր ոսկին է.
12. և ոսկի երկրին այնորիկ աղնիւ. և անդ է սուտակն
և ակն դահանակ: 13. Եւ անուն գետոյն երկրորդի
գեհնոջն. նա՛ պատէ զամ երկիրն եթովպացւոց: 14. Եւ
գետն երրորդ՝ տիգրիս, նա՛ է որ երթայ յանդիման ասո-
րեստանի: Եւ գետն չորրորդ եփրատէս: 15. Եւ ան
ար անձ զմարդն զոր արար, և եդ զնա ՚ի գրախտին փափ-
կուէ՛ գործել զնա և պահել: 16. Եւ պատուիրեաց ար
անձ աղամայ՝ և ասէ. յամ ծառոց որ է ՚ի գրախտիդ՝
ուտելով կերիցե՛ս: 17. Բայց ՚ի ծառոյն գիտութե՛ն
բարւոյ և չարի մի՛ ուտիցէք, զի յորում աւուր ուտիցէք

ի նմանէ՛ մահու մեռանկցիք: 18. Այս ասաց տ՛ր ած, ո՛չ է բարուք մարդոյդ միտն լինել, արասցո՛ւք զմա օգնական ըստ զմա: 19. Այս ստեղծ էս տ՛ր անձ զամ գազանս վայրի, և զամ թռչունս երկնից. և անձ զնոսա առ ազամ տեսանել զինչ կոչեսցէ զնո՛: և անձ շնչոյ կենդանւոյ զինչ և անուանեաց ազամ, այն անուն է նո՛ր: 20. Այս կոչեաց ազամ անուանս անձ անասնոց, և անձ թռչնոց երկնից, և անձ գազանաց վայրի. բայց ազամայ ո՛չ գտաւ օգնական նման նմա: 21. Այս արկ տ՛ր անձ թմբուր ի վ՛ր ադամայ, և ննջեաց. և ան մի ի կողից նո՛ր և ելից ընդ այնր մարմին: 22. և շնեաց տ՛ր անձ զկողն զոր ան յազամայ ի կին, և ան զնա առ ազամ: 23. Այս ասէ ազամ. այս այժմիկ ոսկր յոսկերաց իմոց, և մարմին ի մարմնայ իմոյ. սա կոչեսցի կին, զի յառնէ իւրմէ առաւ: 24. Այս այնորիկ թողցէ այր զհայր իւր՝ և զմայր իւր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ: 25. և եղիցին երկուքն ի մարմին մի: Այս էին երկուքեան մերկ՝ ազամ և կին իւր, և ո՛չ ամաչէին:

CAPUT III.

1. Այս օձն էր իմաստնագոյն քան զամ գազանս որ ի վ՛ր երկրի զոր արար տ՛ր անձ: և ասէ օձն ցկինն. զն է զն ասաց անձ թէ յամ ծառոց որ իցեն ի ներքս ի դրախտի այգր՝ մի ուտիցէք: 2. Այս ասէ կինն ցօձն. ի պողոյ ծառոց դրախտից կերիցուք: 3. բայց ի պղաղոյ ծառոյն, որ է ի մէջ դրախտին, ասաց անձ՝ մի ուտիցէք ի նմանէ, և մի հուպ լինիցիք՝ զի մի մեռանկցիք: 4. Այս ասէ օձն ցկինն. ո՛չ եթէ մահու մեռանկցիք: 5. զի գիտէր անձ թէ յորում առուր ուտիցէք ի

նմանէ. բանայցեն աչք ձեր, և լինիցիք իբրև զաստու-
ածս, ճանաչել զբարի և զչար: 6. Եւ ետես կինն՝ զի
բարի էր ծառն ՚ի կերակուր, և հաճոյ աչաց հայելոյ,
և զեղեցիկ ՚ի տեսանել. և ա՛ռ ՚ի պտղոյ նր՛, եկեր,
և ետ առն իւրում ընդ իւր, և կերան: 7. և բացան
աչք երկոցունց, և զիտացին զի մերկ էին. և կարեցին
տերևս թղենւոյ, և արարին իւրեանց սիւստանելիս: 8. Եւ
լուան զձայն զգնալոյ տնննայ ՚ի դրախտի անդ՝ ընդ եր-
եկս, և թաքեան աղամ և կին իւր յերեսաց տննայ ՚ի
մէջ ծառոց դրախտին: 9. Եւ կոչեաց տր տճ զաղամ,
և ասէ ցնա. ո՛ւր ես: 10. և ասէ. լուայ զձայն քո ՚ի
դրախտի աստ՝ և երկեայ. քանզի մերկ էի և թաքեայ:
11. Եւ ասէ ցնա. ո՞ պատմեաց քեզ թէ մերկ ես. բայց
եթէ ՚ի ծառոյն յորմէ պատուիրեցի քեզ՝ անտի եւթ չուտել,
կերար արդեւք ՚ի նմանէ: 12. Եւ ասէ աղամ. կինս
զոր ետուր ընդ իս՝ սա՛ ետ ինձ ՚ի ծառոյ անտի և կե-
րայ: 13. Եւ ասէ տր տճ ցկինն. զննչ գործեցեր զայդ:
և ասէ կինն. օձն խարեաց զիս, և կերայ: 14. Եւ
ասէ տր տճ ցօձն՝ փոխանակ զի արարեր դու զայն, անի-
ծեալ լիջիւր դու յամենայն անասնոց և յամ՝ գազանաց
երկրի. ՚ի վերայ լանջաց և որովայնի քոյ զնասցես, և
հոգ կերիցես զամ տուրս կենաց քոց: 15. և եղից
թշնամութի ՚ի մէջ քո և ՚ի մէջ կնոջդ, և ՚ի մէջ զա-
ւակի քոյ և ՚ի մէջ զաւակի դորա. նա սպասեսցէ քում
պլիոյ, և դու սպասեսցես նորա՛ գարշապարի: 16. Եւ
ցկինն ասէ. բազմացուցանելով բազմացուցից զտրամութիս
քո և զհեծութիս քո. տրամութի՛ ճնցես որդիս. և
առ այր քո դարձ քո, և նա՛ տիրեսցէ քեզ: 17. Եւ
ցաղամ ասէ. փոխանակ զի լուար ձայնի կնոջդ քոյ, և
կերար ՚ի ծառոյ անտի, յորմէ պատուիրեցի քեզ անտի

Միայն չուտել, և կերար 'ի նմանէ, անիծեալ լիցի երկիր 'ի գործս քո. արտուութի՞ կերիցես զնա զամ աւուրս կենաց քոց: 18. փոռչ և տատասկ բուսուսցէ՞ քեզ. և կերիցես զբանջար վայրի: 19. քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո, մինչև զարձցիս յերկիր ուստի առար. զի հող էիր և 'ի հող դարձցիս: 20. Եւ կոչեաց ագամ զանուն կնոջ իւրոյ կեանս. զի նա է մայր ամ կենդանեաց: 21. Եւ արար տր ան աբամոյս և կնոջ նր հանդերձս մաշկեղէնս, և զգեցոյց զնս. 22. Եւ ասէ տր ան. ահա ագամ եղև իբրև զմի 'ի մէնջ՝ զիտել զբարի և զչար. և արդ գուցէ ձգիցէ զձեռն և առնուցու 'ի ծառոյն կենաց, ուտիցէ և կեցցէ յաւիտեան. 23. Եւ եհան արձակեաց զնա տր ան 'ի դրախտէ անտի փափկութե՞ գործե՞լ զերկիր ուստի առաւ: 24. Եւ եհան զագամ, և բնակեցոյց յանդիման դրախտին փափկութե՞. և հրամայեաց քերոբէից և բոցեղէն սրոյ շուրջանակաւ պահել զձանապարհս ծառոյն կենաց:

CAPUT IV.

1. Եւ ուտ ագամ առ եւայ կին իւր, և յղացաւ և ծնաւ զկային. և ասէ. ստացայ մարդ ան: 2. Եւ յաւել ծնանել զեղբայր նր զհաբէլ. և եղև հաբէլ հովիւ խաշանց, և կային գործէր զերկիր: 3. Եւ եղև յեա աւուրց՝ եբեր կային 'ի պաղոյ երկրի պատարագ ան: 4. ան և հաբէլ յանդրանկաց խաշանց իւրոյ և 'ի պարարտաց նց. և հայեցաւ ան յաբէլ և 'ի պատարագս նր: 5. և 'ի կային և 'ի զոհս նր ոչ նայեցաւ. և տրտմեցաւ կային յոյժ, և խոնարհեցան անկան երեսք իւր: 6. Եւ ասէ տր ան ցկային. ընդէ՞ր տրտմեցար, կամ ընդէ՞ր խոնարհե-

ցան անկան երեսք քո: 7. ո՛չ ապաքէն եթէ ուղի՛ղ մատուցանես, և ուղիղ ո՛չ բաժանես՝ մեղա՛ր. լո՛ւս լեր, առ քե՛ղ լեցի դա՛րձ ն՛ր, և դո՛ւ տիրեսցես նա՛ն: 8. Նւ ասէ կային ցհարէլ եղբայր իւր, եկ երթիցուք ՚ի դաշտ: և եղև իբրև չոգան ՚ի դաշտ անդր, յարեաւ կային ՚ի վերայ արիւի եղբօր իւրոյ և սպան զնա: 9. Նւ ասէ տ՛ր անձ ցկային. ո՛ւր է հարէլ եղբայր քո. և նա ասէ՝ չգիտեմ: միթէ պահապան իցեմ եղբօրն խմոյ: 10. Նւ ասէ անձ. զն՛նչ գործեցեր զայդ. գոչումն արեան եղբօր քո բողոքէ՛ սա իս յերկրէ: 11. և արդ՛ անիճեալ լիջիւր դու ՚ի վ՛ր երկրի, որ եբաց զբերան իւր ընդունել զարինն եղբօր քոյ ՚ի ձեռաց քոց: 12. զի գործիցես զերկիր՝ և ո՛չ յաւելցէ տալ քեզ զզօրութի իւր. երերեալ և տատանեալ եղեցես ՚ի վ՛ր երկրի: 13. Նւ ասէ կային ցտ՛ր անձ. մե՛ծ է պատիժ իմ քան զթողուլդ զիս: 14. եթէ հանես զիս այսօր յերեսաց երկրէ, և յերեսաց քոց թաքեայց. և լինիցիմ երերեալ և տատանեալ յերկրի. և եղիցի ամ որ գտանիցէ զիս՝ սպանցէ զիս: 15. Նւ ասէ ցնա տ՛ր անձ. ո՛չ այդպէս: ամ որ սպանանէ զկային, եւթն վրէժս լուծցէ: և եդ տ՛ր անձ նշան ՚ի կային՝ չսպանանե՛լ զնա ամի որ գտանիցէ զնա: 16. Նւ ե՛լ կային յերեսաց նոյ. և բնակեցաւ յերկրին նայիդ յանդիման եզեմայ: 17. Նամուս կային առ կին իւր, և յղացաւ և ծնաւ զհնօք: և շինէր քաղաք, և զնէր անուն քաղաքին յանուն որդւոյ իւրոյ հնօքայ: 18. Նւ եղև որդի հնօքայ գայերիդադ: և գայերիդադ ծնաւ զմայիէլ: և մայիէլ ծնաւ զմաթուսադա: և մաթուսադա ծնաւ զղամէք: 19. Նւ սա իւր զամէք երկուս կանայս. անուն միումն ադդա, և անուն երկրորդին սէլլա: 20. Նւ ծնաւ ադդա զյովէլ. նա՛ է հայր այնոցիկ որ

բնակեալ են 'ի վրանս խաչնարածաց: 21. և անուն եղբօր նր՝ յովբայ: նա՛ է հայր՝ որ եցոյց զերգս և զքնարս: 22. Ալ սէլա ֆնաւ զԹորէլ, և էր ճարտարապետ դարբին՝ պլնձոյ և երկաթոյ. և քոյր Թովբեյայ նոյեմա: 23. Ալ ասէ զամէք ցկանայս իւր ցադդա և ցսէլա. լուարո՛ւք ձայնի իմօմկանայք զամեքայ, և ո՛ւնկնդէք բանից իմոց. զի այր սպանի 'ի վէ՛րս ինձ, և երիտասարդ՝ 'ի հարուածս ինձ: 24. զի թէ եւթն անգամ վրէժք խնդրիցին 'ի կայենէ. ապա և 'ի զամեքայ եւթանասնեկին եւթն: 25. Ամուտ ադամառ եւայ կին իւր, և յղացու և ծնաւ որդի. և անուանեաց զանուն նր՝ սէթ. ասէ: զի յարոյց ինձ անձ զաւակ ա՛յլ փոխանակ հաբիլի զար սպանն կային: 26. Ալ սեթայ եղև որդի, և անուանեաց զանուն նր՝ էնո՛վս. նա յուսացաւ կոչել զանուն տն՝ ա՛յ:

II. TSCHAMTSCHÉAN. Compend. histor. Arm.
Lib. I. cap. 3.

Ժամանակ Արամայ մինչև ցԱ՛նուշաւան:

Արամորդի Հարմայ յաջորդեալ 'ի տեղի հօր իւրոյ եղև անուանի յոյժ յԵ՛ ան. վն՝ զի խոհական և արիական գործոց զհետ լեալ՝ արար բճմ քաջուիս. և 'ի վր՝ հայրենեաց խնամարկեալ լարձակեաց դնոյն 'ի լերանցն Աովկասու մինչև 'ի լերինս Տորսի՛ վանելով զամ՝ թշնամիս, որք նորոգ սկսեալ էին մուտ առնել յայն Ե, և նեղել զաղզն:

Աին 'ի սոցանէ էր Աիւքար իշխանն Մեդայեոց ցի Սարաց՝ այր հպարտ, որ 'ի յետին ժամանակս Հարմայ հասեալ զօրօք 'ի սահմանս ուրեք Հայոց՝ 'ի հարկի կացուցեալ էր զնս՝ ամս երկուս, և հանդերձեալ էր յարձակել 'ի ներքս: Իսկ Արամայ ժողովեալ 'ի Հայոց արս քաջս և աւուրչս,
Chrest. armen.

զաղեղնաւ որս և զվաղակաւորս իւր յիտուն հազար, և դիմեալ յայն կողմն իւրոյ Ֆին՝ ուր տիրեալ էր Նիւքար, յաւուր միում յանկարծակի յառաջ քան զճագել արևու եհաս և անկաւ ՚ի վր՛ նր՛. և ՚ի դիմի հարեալ սատակեաց զբազմութի՛ ամբոխից նր՛, և կալեալ զնա ինքն զՆիւքար էած յԱրմաւիր. և հրամայեաց ցից երկաթի վարել ը՛ ճակատ նր՛, և վարսել ՚ի ծայր աշտարակի սլարսպին ՚ի տեսիլ անցաւորաց. և զՖն Նիւքարայ ը՛ մասին կացոյց ՚ի հարկի մինչև ցլեառն Օւարասպ:

Յետ իւր երից ամաց դիմեաց յՖն Հայոց Բարշամ իշխանն Բաբելացոց քառասուն հազար հետեակօք և հինգ հազար հեծելազօրօք: Առե՛լ յայնժամ Արամայ զաղեղնաւորս և զվաղակաւորս իւր՝ յարձակեցաւ ՚ի վր՛ նր՛. և յանախնկալ պահու պատահեալ նմ՛ հալածական արար զզօրս նր՛. և սատակեաց զբզմն ՚ի նոցանէ. և կալեալ զԲարշամ սպան զնա:

Իսաղաց ապա յարեմուսս ՚ի կողմանս Ապպադովկացոց քառասուն հազար հետեակօք, և երկու հազար հեծելովք: Իսկ Պայարբիս իշխանն այնոցիկ կողմանց՝ որ ՚ի տանէն Քամայ՝ տեսեալ թէ տիրել ունի Արամ սահմանաց իւրոց՝ ել ըզէմ՛ նր՛ սատորիկ պատերազմաւ: Աւ Արամ հասեալ ՚ի վր՛ նորա՝ փախստական տարաւ զնա, և էարկ ՚ի կղզի ինչ միջերկրական ծովուն (որ թու՛ի լինել Արպրոս): Աւ ապա դարձ արարեալ ՚ի Ապպադովկիս՝ եղ. անդ մարզպան զմի ոմն յաղգէ իւրմէ Մշակ անուն, և տասն հազար զօր ը՛ նմ՛ ՚ի վր՛ Ֆին. և հրամայեաց՝ զի բնակիչք Ֆին այնորիկ խօսեսցին ՚ի լեզու Հայոց. և ինքն զնաց յՖ իւր ՚ի Հայս. և անդ ևս եցոյց կրկին բազում գործս քաջուն՛ յայլևայլ սահմանս, և արար բազում ուղղուի՛ ս. և այնչափ եղև անո՛ւանի, մինչև յա-

նուն նր կոչել այլոց ազգաց զ՝ մեր՝ Արմէնիա, և զաղգս՝
Արմէն կամ Արմէնի, այսինքն է Արամեան :

Իսկ ՍՂակ մարզպան (որ ՚ի գիրս Յունաց Սոշոք կոչել)
չինեացանդ ՚ի կապաղովկիա՝ քաղաք, և պարսպեաց որմովք,
և կոչեաց զայն յանուն իւր ՍՂակ. իսկ բնակիչք տեղւոյն
ոչ կարելով ուղիղ արտասանել՝ անուանեցին Մաթակ. որ և
յետոյ կոչեցաւ Աեսարիա. այն է Ղայսերի :

Եւ քանզի այն թ՝ զոր էառ Արամ՝ արտաքոյ է մեծին
Հայոց, վնկ կոչեցաւ առաջին Հայք (արտաքոյ մեծի Հայ-
աստանի), և մասնաւոր յորջրջմամբ կոչեցաւ ՚ի Յունաց
Արմէնիա. և զի Արամ հետ զհետէ էառ և զայլ բազում տե-
ղիս յայնոսիկ կողմանս, և ելից բնակչօք, և ետնց խօսել Հայ-
երէն, սին իրինս և այնքիկ սահմանք կոչեցան երկդ Հայք,
և երկդ Հայք. երեքին ՚ի միասին անուանեալ փոքր Հայք:
Եւ զի առ երկ կայ նց մին ՚ի Տնդետասան թաց մեծին Հայոց
առ Եփրատաւ, հայելով առ սոսա կոչեցաւ այն Հրդ Հայք:
Եւ եղև ՚ի Թագաւորել Աինոսի յորդուոց անտի Բէլայ ՚ի
վր Ասորեստանի տիւրքերական իշխանու թք, և ՚ի գործել նր
մեծամեծս, տեղեկացեալ ՚ի պատմութեց՝ թէ Բէլ նախա-
հաւ իւր սպանեալ լցէ ՚ի Հայկայ՝ երկնէր ՚ի սրտի առնույ
վրէժ յորդուոց նր. որոյ վն կամեցաւ յարձակիլ ՚ի վր Արա-
մայ. բայց խորհրդով աւագանւոյն նահանջեցաւ՝ զանդխտեայ
՚ի համբաւոյ արիական գործոցն Արամայ. խաղաղութի խօ-
սեցեալ ապա ի նման անուանեաց զնա երկրդ իւր. և ետ նմա
ածել վարսակալ մարզարտեայ, որ յայնմ ժամանակի մեծի
փառաց էր նշան : Եւ Արամ պայազատեալ զազգ իւր ամ
իւր ծի վախճանեցաւ. թողեալ զտերութի աղբին որդւոյ
իւրում Արայի :

Արայ սրդի Արամայ՝ որ վն դեղայ գլմացն կոչեցաւ գե-
ղեցիկ, պայազատեալ զՀայս՝ պատուեցաւ ՚ի Աինոս. և
ն^ի*

նորոգ զարդարեաց զՏս շայոց յորմէ և Տն այն՝ յորում էր պիտաւոր քաղաքն Արմաւիր, կոչեցաւ Արարատ կամ Այրարատ, յորմէ և բոլոր շայաստան, ևս և իշխանուի՛ն շայոց անուանեցաւ Այրարատեան: Սա կեցեալ ամն քանի մի՝ ճնաւ զԱրարդոս ՚ի՛ Աու՛արդայ կնոջէ իւրմէ:

Եւ եղև ՚ի մեռանիլ յաւուրս նր՝ Աինոսի՝ Թագաւորեաց ՚ի վր՛ Ասորեստանեայց կինն նր՝ Շամիրամ: և սս՛ եղև ՚ի կանայս որ Թագաւորեաց զառաջինն: Այս կին գոլով վամաշոս՝ լու՛նեալ զգեղեցկութէ՛ն Արայի պատգամաւորս յղեաց առ նա՛ գալ և ամուսնանալ լէ իւր, և Թագաւորել ՚ի՛ Աինու՛նէ. և կամ յետ կատարելոյ զկամս իւր դառնալ յետս բազմապատիկ պարգևօք: Եւ զկնի բազում պատգամաւորութեց իբրև ոչ էառ յանձն Արայ զայսպիսի հրաւէր անարժան՝ զիմեաց Շամիրամ՝ ՚ի վր՛ նորա պատերազմաւ. այլ հրամայեաց զօրաց իւրոց, զի զգուշասցին Արայի կենդանւոյն ունել զնա:

Եւ Արայ զօրօք լէդէմ նր՛. և ՚ի խառնիլ ճակատուցն՝ անկաւ Արայ ՚ի մարտի և մեռաւ. պայազատեալ ամն իբր ինչ: Աու՛նեալ Շամիրամայ զմահ Արայի շու՛արեցաւ և սգացաւ. և հրամայեաց գտանել զգի նր՛, և դնել ՚ի տեղե զգուշաւոր. զի գուցէ զիւթութք՝ հնարեսցի կենդանացուցանել զնա: Իսկ զօրք շայոց զրգուեալ միւսանգամ վրէժիմագիր լինել մահունն Արայի պատրաստեցան նմ զօրութք՝ ՚ի պատերազմ լէդէմ Շամիրամայ: Այլ Շամիրամ իբրև ետես՝ թէ զիւթութք չկարայ յարուցանել զԱրայ, մանաւանդ թէ նեխեցաւ զի նր՛, հրամայեաց ընկենուլ զնա ՚ի վիհ մի մեծ, և ծածկել. և փսխան նր՛ զմի ոմն ՚ի հոմանեաց իւրոց զարդարեալ՝ համբաւեաց թէ զիքն լիզեալ զԱրայն յարուցին ՚ի կեսնս: Յայսմ համբաւոյ զօրք շայոց հանդարտեալ դադարեցան ՚ի պատերազմէ. և Շամիրամ ՚ի սէր Արայի զԱրարդոս որդի նր՛ որ էր երկոտասան ամաց, անուանեաց Արայ, և կացոյց ՚ի

տեղն նր՝ Ասցեալ Շամիրամայ 'ի Հայո զժամանակ ինչ, և տեսեալ զգեղեցիութի երկրին Հայոց, և զմաքրութի օրոց, և զգեղմունս ահանակիտ աղբերաց, շինեաց յերզ ծովսն Մղթամարայ (յարևելից ի հարաւակողմն) քաղաք հրաշակերտ. աշխատեցուցեալ յայս գործ երկոտասան հազար գործաւորս և վեց հարիւր ճարասրապետս յամարհետից. այն է քաղաքն Շամիրամակերտ. որ յետոյ Աւան կոչեցաւ. և եղև իբր ամարանոց Շամիրամայ:

Կարդոս՝ որ և Մրայ Մրայեան կոչեցաւ, յետ միապետելոյ զՀայո ճեւալ ՂՆուշաւան. և նուիրեաց զայն 'ի սօսիսն՝ նի յանտառս սօսեացն Մրմենակայմօտ յՄրմաւիր. զի որ նուիրեալ լինէր 'ի նոսին՝ Ծք համարիւր և զիւցազն. վն զն կարծէին՝ թէ զիք բնակին 'ի սօսիսն անդ. յայս իսկ և Մնուշաւան Սօս կոչեցաւ նի սօսանուէր:

Յայն աւուրան յարեալ Արնուէաս որդի Շամիրամայ լուգեմ մօր իւրոյ. և 'ի գրդուիլ ահեղ պատերազմաց՝ փախեալ Շամիրամ 'ի Հայս. և մրաբանեալ ի Կարդոսի յարձակեցաւ 'ի վն Արնուէասայ. և մեռաւ 'ի մարտի ի Կարդոսի 'ի հասակի կբ ամաց. իսկ Կարդոս 'ի հասակի լամաց, պայազատեալ զՀայս ամն իբր ժլ:

Մնուշաւան որդի Կարդոսի 'ի տղայութե հասակի՝ գուրով իբր ժիւ ամաց՝ անկաւ 'ի ձեռս Արնուէասայ, և եկաց յարքունիս նր իբր գերեալ սրդի իշխանի: Աւ սակայն յետոյ 'ի զարգանալ իւրում հաճոյացեալ մեծամեծաց վն անուշութն բարուցն՝ միջնորդութե նց ազատեալ 'ի ձեռաց նր՝ էառ յինքն զմասն ինչ իւրոյ թին՝ խոտանալով տալ նմա հարկս: Եւ եղև սա սյր բազմահանձար և զօրաւոր. որ և զկնի ժամանակաց զբաւեաց յինքն զԹ իւր համայն. և արար բազում գործս ուղղութե. և կեցեալ յետ մահուն Կարդոսի ամն իբր կի. մեռաւ:

III. EZNIKII Refutatio haeresiarum lib. IV.
haeresis Marcionis.

Cap. 1. ՄԱՐԿԻՈՆ՝Ն մոլորեալ մոլծանէ օտարու-
թիւն ընդդէմ աստուծոյն օրինաց, եղեալ ընդ նմա և զհիւզն
էութեամբ, և երիս երկիրն: Ի միոջն, ասեն, ընակեալ է
օտարն. և յերկրորդումն օրինացն աստուած. և յերրորդումն
զօրք նորա. և յերկրի հիւզն, և կոչեն զնա զօրութիւն երկրի:

Եւ այնպէս կարգէ զաշխարհէ և զարարածոց, որպէս
օրէնքն ասեն: Եւ և յաւելու՛ թէ հաղորդութեամբ ընդ
հիւզեայն արար զամենայն զոր արար. և որպէս թէ էգ ոք
ինչ և կին ամուսնուէ էր հիւզն: Եւ յետ առնելոյ զաշխար-
հըս ելինքն զօրօքն հանդերձ յերկիրնս. և հիւզն և որդիք
նր մնացին յերկրի, և կալան զիւրաքանչիւր իշխանուի, հիւզն
յերկրի, և օրինացն նձ յերկիրն:

Եւ տեսեալ օրինացն նյ՛ թէ գեղեցիկ է աշխարհս, խոր-
հեցաւ առնել ՚ի սմա մարդ: Եւ իջեալ առ հիւզն յերկիր,
ասէ. տուր ինձ ՚ի կաւոյդ քումնէ, և յինէն տամ ոգի, և ա-
րասցուք մարդ ըստնմանուէ մերում: Տուեալ նմա հիւզեայն
յերկրէ իւրմէ, ստեղծ զնա և փչեաց ՚ի նա ոգի, և եղեւ Եդամ
՚ի շունչ կենդանի. և վասն այնորիկ անուանեցաւ Եդամ. զի
՚ի կաւոյն արարաւ: Եւ ստեղծեալ զնա և զամուսիննորա, և
եղեալ ՚ի գրախտին՝ որպէս և օրէնքն ասեն, զային հանապազ
պատուիրէին նմա, և ուրախ լինէին ՚ի նմա իբրև յորդոջ
հասարակաց:

Եւ տեսեալ, ասէ, աստուծոյն օրինաց որ տէրն էր
աշխարհի՛ թէ ազնուական է Եդամ և արժանի սպասաւորու-
թեան, ճնարեցաւ՝ եթէ զխորդ կարասցէ գողանալ զնա ՚ի
հիւզեայն, և յիւր կողմն միաբանել: Եւ եալ զնա ՚ի մի կողմն,
ասէ, Եդամ, ես եմ աստուած և չիք այլ ոք. և բայց յինէն
պլ աստուած քեզ մի լիցի. ասա թէ ունիցիս զոք պլ աս-

տուածս բոյց յինէն, գիտաստիք զի մահու մեռանիցիս: Աստուծոյ ասաց զայս ցնա, և յիշատակեաց նմա զանուն մահու, զահի հարեալ Ադամայ՝ սկսու ռակաւ զանձն մեկնել ՚ի հիւղեայն:

Ասեկեալ հիւղեայն՝ պատուիրել նմա ըստ ստորունն, տեսանէր՝ զի ոչ անսայր նմա Ադամ, ոյլ խորհեալ ՚ի բաց մերժէր, և չմերձենայր առ նա: Յայնժամ հիացեալ ՚ի միտս իւր հիւղեայն, իմացաւ թէ տէրն արարածոց նենգեաց նմա: Ասէ. յականէ աղբերն պղտորեալ է ջուր նորա. զն՛նչ է այս, չե ևս բազմացեալ Ադամայ ճննողովք, և զողացաւ զնա անսամբ աստուածութեանն իւրոյ յինէն: Արովհետեւ ատեաց զնա, և ոչ պահեաց ընդ իս զդաշնն, ես արարից աստուածս բազումս, և լցից նոքօք զաշխարհ գոյիւ իւրով, զի խնդրիցէ թէ ո՛վ իցէ աստուած, և ոչ գտանիցի:

Աս արար, ասեն, կուռս բազումս և անուանեաց զնոսա աստուածս, և ելից նոքօք զաշխարհ: Աս ընկղմեցաւ անուն աստուծոյ, որ տեսունն արարածոց, ՚ի մէջ անուանց բազում աստուածոց, և ոչ ուրեք գտանէր: Աս մուրեցաւ ճնունդ նորա նոքօք, և ոչ պաշտէր զնա, զի ձգեաց զամենեւին առ ինքն հիւղն, և ոչ ետ թոյլ և ոչ միտմ ՚ի նոյսնէ պաշտել զնա: Յայնժամ, ասեն, բարկացաւ տէրն արարածոց, զի թողն զնա և անսային հիւղեայն. և մի ըստ միտքէ, որ ելանէին ՚ի մարմնոց իւրեանց, արկանէր զնոսա առ ցամանն ՚ի գեհեն. և զԱդամ արկ ՚ի գեհեն վասն ծառայն. և այնպէս արկանէր գայր ՚ի գեհեն զամենեւին, մինչև ցքսան և ինն գար:

Աս տեսեալ, ասեն, աստուծոյն բարւոյ և օտարի, որ նստէր յերրորդ երկինս, թէ այնչափ ազգք կտրեան և ասնջեցան ՚ի մէջ երկուց նենգաւորաց՝ անսունն արարածոց և հիւղեայ, ցաւեաց նմա վասն անկիւրցն ՚ի ջուր և տանջիւրց: Աս արեաց զորդի իւր երթալ փրկել զնոսա, և ասնուլ զնմանու-

Թիւն ծառայի, և ընենէլ 'ի կերպարանս մարդոյ 'ի մէջ որդւոց աստուծոյ սրինացն: Բժշկէսջիր, ասէ, զըորստս նոցա, և կեցուսջիր զմեռեալս նոցա, և բացջիր զկոյրս նոցա, և արասջիր 'ի նոսա բժշկուԹիւնս մեծամեծս ձրի. մինչ զի տեսանիցէ զքեզ տէրն արարածոց, և նախանձիցի, և հանիցէ զքեզ 'ի խաչ: Եւ ապա 'ի մեռանեւն քում լիջցես 'ի դժոխս, և հանցես զնոսա անտի: զի չեն սովոր դժոխք՝ ընդունել 'ի միջի իւրեանց զկեանս: Եւ վասն այնորիկ ելանես 'ի խաչ, զի նմանեսցիս մեռելոց. և բացցէ դժոխսականն զերբանն իւր՝ ընդ: ւնել զքեզ. և մտցես 'ի մէջ նորա, և Թափուր արասցես զնս:

Եւ իբրեւ եհան զնա 'ի խաչ, ասեն, էջ 'ի դժոխսն, և Թափուր արար զնա: Եւ հանեալ զոգիսն 'ի միջոյ նորա, տարաւ յերբորդ երկինսն առ հայրն իւր: Եւ տէրն արարածոց զայրացեալ, առ ցասմանն էցել զպատմուճանն իւր և զվարագոյր տաճարին իւրոյ. և խաւարեցոյց զարեգալն իւր, և զգեցոյց Թուխս աշխարհին իւրում, և նստաւ 'ի սուգ առ տրտմուԹեանն:

Ապա երկրորդ անգամ իջեալ Յեսու կերպարանօք աստուածուԹեան իւրոյ առ տէրն արարածոց, զնէր դատ չենմա վասն մահուն իւրոյ: Եւ տեսեալ տեսառն աշխարհի զաստուածուԹիւնն Յեսուայ, գլտաց՝ Թէ դոյ այլ աստուած արտաքոյ քան զնա: Եւ ասէ ցնա Յեսու. դատաստան կայ իմ ընդ քեզ, և մի՛ ոք լիցի դատաւոր 'ի միջի մերում, այլ քո իսկ օրէնքն՝ զոր զրեցեր: Եւ իբրեւ եգին զօրէնսն 'ի միջի, ասէ ցնա Յեսու. ոչ դու գրեցեր յօրէնսդ քում՝ Թէ որ սպանանիցէ մեռցի. և որ հեղու զարիւն արդարոյ, հեղէ՛ն զարիւն նսրա: Եւ ասէ. այոես գրեցի: Եւ ասէ ցնա Յեսու. արդ տուր զքեզ 'ի ձեռս իմ՝ զի սպանից և հեղից զարիւն քո, որպէ՛ս սպաներն դու զիս և հեղեր զարիւն իմ, զի արդար եմ իրաւամբք քան զքեզ, և

երախտիս մեծամեծս արարի յարարածսն քում: Աւ սկսաւ համարել զերախտին, զոր արար յարարածս նորս:

Աւ իբրեւ ետես տէրն արարածոյ՝ թէ յաղթեաց նմա, և ոչ զիտէր զի՛նչ խօսիցի, քանզի յիւրոց օրինացն պարտաւորեցաւ, և չգտանէր տալ պատասխանի, զի եղև մահապարս փոխանակ մահուանն նորա, ապա յողոքս անկեալ աղաչէր զնա՝ թէ փոխանակ զի մեղայ և սպանի զքեզ յանգէտս, քանզի ոչ զխտացի թէ ստտուած իցես, այլ մարդ համարէի զքեզ, տուեալ քեզ ընդ այնր վրիժուց՝ զամենեսեսն որ կամիցին հաւատալ ՚ի քեզ՝ տանել յո՛ւ և կամիցիս: Ապա թողեալ զնա (Հետուայն՝ յափշտակեաց առ զՊաւղոս, և յայտնեաց նմա զգինսն, և առաքեաց զնա քարոյել՝ թէ գնոց գնեալ եմք մեք, և ամենայն որ հաւատայ ՚ի Հետու՝ վաճառեցաւ յարգարոյ անտի բարւոյն:

Այս սկիզբն է աղանբոյն Սարկիտոնայ. թող զայլ բազում թարմատարսն, և զայս ոչ ամենեքին զիտեն, այլ սակաւք ՚ի նոցանէ. և աւանդեն զուսումնն միմեանց ՚ի բերանոյ. ասեն, օտարին՝ գնովք գնեալ է զմեզ ՚ի տեառնէն արարածոց, և թէ որպէս կամ իւ գնեալ իցէ, զայն ոչ ամենեքին զիտեն:

Cap. XVI. ՍՆՐԿԻՈՆԱՅ այս ՚ի պնտացւոց աշխարհէ անտի եղեալ էր, որգի եպիսկոպոսի: Աւ ապականեալ զկոյս մի, զնաց փախստական վասն մերժելոյ զնա յեկեղեցւոյ՝ իւրոյ իսկ հօրն: Աւ երթեալ ՚ի Հռովմ ինդրել ապաշխարութիւն յայնմ ժամանակին, և շնասեալ այնմ՝ զրգուցաւ ընդգէմհաւատոց: Աւ եգեալ երիւ առաջս, ուսուցանէ զբարւոյ և զարգարոյ և զչարէ: Աւ զնոր կտակարանս օտարտի համարի ՚ի հնոյն, և յայնմանէ, որ ՚ի նմայն խօսէր, զյարութիւն մարմնոյ արհամարհէ: Աւ մկրտութիւն ոչ մի

միայն տայ, այլ և երիտ յետ յանցանելոյ. և փոխանակ երա-
խայից մեռելոց՝ այլոց ստիպէ առնուլ կնիք: Այլ այնչափ
յանդգնեալ՝ մինչեւ կանանց հրամայէ մկրտութիւն տալ, զոր
ոչ ոք իշխեաց յայլոց աղանդոցն առնել. ոչ կնիք կրկին և
երեքկին տալ, և ոչ զկանայս առ քահանայս ունել:

Աս և նմա իսկ ուստի իցէ քահանայութիւնն, որոյ ապա-
կանեալ զկոյս՝ տարագիր եղեւ յեկեղեցւոյ յիւրմէ հօրէ, մին-
չեւ ապաշխարութեան եւս հասանել ոչ եղեւ արժանի: Այլ
յիրաւի չեղեւ արժանի, զի ՚ի պատգամս հոգւոյն սրբոյ իշխեաց
ձեռն արկանել, զկէսն հատանել ընկենուլ իբրեւ զխոտան,
և զկէսն ընտրել առնուլ իբրեւ զպիտոյս: Այլ զայն ոչ զիտէ
թէ յորժամ ՚ի մարմնոց մատն մի կտրիցէ առնուցսւ, զամե-
նայն մարմնոյն իսկ վկայէ սակաւինչ մասնն կտրեալ: Առաւել
եւս յանդիմանէ զնա կատարիչն օրինաց, որ ասէր՝ թէ ոչ եկի
լուծանել զօրէնս և զմարգարէս, այլ ընուլ զնոսա. և Առա-
քեալն, որ ասէ թէ Վրիստոս է խաղաղութիւնն մեր, որ
արար զերկոսին ՚ի մի: Արուն փառք յաւիտեանս յաւտենից.
ամէն:

IV. ELLISEI hist. de Vardano et bello Armeniorum
lib. II. p 41. sqq. ed. Ven. 828.

ՄԻՆՐՆԵՐԱՆ՝ ՎՁՐՈԿ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ԱՅՐԱՆ և
տաներան, շայոց մեծաց ողջոյն շատ:

Գուք գիտասցիք, ամենայն մարդ՝ որ բնակեալ է ՚ի ներ-
քոյ երկնի, և ոչ ունի զօրէնս դեռի մաղդէզն, նա խուլ է և
կոյր, և դիւաց շարամանոյ խարեալ: Վրանդի մինչ չեւ
էին երկինք և երկիր, Օրուան մեծն աստուած յաշտ առնէր

զհազար ամ, և ասէր. թօերեւս լեցի իմ որդի Որմիզդ անուն,
արասցէ զերկին և զերկիր: Եւ յղացաւ երկուս յորովայնի.
Քի վասն յաշտ առնելոյ, և զմեւն եւս թերեւան ասելով:
Իբրեւ գիտաց, եթէ երկու են յորովայնիս, Որ վաղ եկեացէ,
ասէ, նմա տաց զԹագաւորութիւնս: Իսկ որ էր 'ի թերա-
հաւատութենէն յղացեալ, պատառաց զորովայնն և ել 'ի
դուրս: Ասէ ցնա Օլրուանն: Ո՞վ ես դու: Ասէ. Որդին
քոյ եմ Որմիզդ: Ասէ ցնա Օլրուանն. Իմ որդին լուսաւոր է
և անուշահոտ, դու խաւարային ես և չարասէր: Եւ իբրեւ
կարի դառնապէս ելաց, ետ ցնա զԹագաւորութիւնն հա-
զար ամ:

Իբրեւ ծնաւ զմեւս եւս որդի, անուանեաց զնա Որմիզդ.
եհան զԹագաւորութիւնն յԱրհմնէ, և ետ ցՈրմիզդն. և
ասէ ցնա. Յայժմ ես քեզ յաշտ արարի, արդ դու ինձ արա:
Եւ Որմիզդ արար զերկինս և զերկիր. իսկ Արհմն ընդդէմ
չար գործեաց: Եւ այսուէս բարժանին արարածքս. հրեշտակք
Որմիզդի են, իսկ դեւքն Արհմնոյն. և ամենայն բարիք՝ որ
յերկնից և այսր լինին՝ Որմիզդի են, և ամենայն վնասք՝ որ
անտի և այսր գործին՝ զայն Արհմն արար: Այնպէս յերկիրս
որ ինչ բարի է զայն Որմիզդն արար, և որ ոչն է բարի զայն
Արհմն արար. որպէս զմարդ Որմիզդ արար, և զխտս և
զհիւանդութիւնս և զմահ Արհմն արար: Եւ ամենայն թշուա-
ռութիւնք և պատահարք՝ որ լինին, և պատերազմունք դառ-
նութեան՝ չարին մասին արարածք են: Իսկ յաջողութիւնք
և տէրութիւնք և փառք և պատիւք և առողջութիւնք մար-
մնոց, զեղեցկութիւնք դիմաց և ճարտարութիւնք բանից և
երկայնակեցութիւնք ամաց, այդ 'ի բարւոյն առնուն զգոյա-
ցութիւն. և ամենայն որ ոչ այդպէս է, 'ի նա չարին արարած
խառնեալ է:

Եւ ամենայն մարդիկ մոլորեալ են, որ ասեն՝ եթէ զմահ

Մտուած պար, և շար և բարի ՚ի նմանէ լինին մանաւանդ որպէս բրիտոնեայք ասեն, թէ Մտուած նախանձոտէ, վասն թշոյ միոյ ուտելոյ ՚ի ծառոյն Մտուած զմահարար, և զմարդըն արկ ընդ այնու պատուհասիւ: Օայգպիսի նախանձ և ոչ մարդ առ մարդ ունի, թող թէ Մտուած առ մարդիկ, զի որ զայս ասէ՝ նա խուլ է և կոյր և ՚ի պիւաց Հարամանոյ խաբեալ:

Գարձեալ մեւս եւս այլ մոլորութիւն ասեն. Մտուած, ասեն, որ զերկինս և զերկիր արար, եկն և ՚ի կնոջն ումեմէ ծնաւ, որում անուն էր Մարիամ, և առն նորա Յովսէփ: Եւ զՏեո այսպիսի մարդոյ մոլորեալ են բաղումք: Եթէ աշխարհն Հոռոնոյս յոյժ յիմարութեան տգիտաբար մոլորեալ են, և զրկեալ են ՚ի կատարեալ պէնէս մերմէ, յանձանց պարմայեն զմիտան իւրեանց. պուք եւս ընդէր զՏեո նոցա մոլորութեանն ցնորիք: Եւ զոր օրէնս տէրս ձեր ունի, զնոյն և դուք կալարուք. մանաւանդ զի և առաջի Մտուծոյ վասն ձեր համարս ունիմք տալ:

Մի՛ հաւատայք առաջնորդացն ձերոց, զար նաճրացիսդ անուանէք, քանզի յոյժ են խարերայք, զոր բանիւք ուուցանեն, գործովք ոչ կարեն յանձն առնուլ: Միս ուտել ոչ ասեն մեզք, և ինքեանք ուտել ոչ կամին. կին առնել արժան է, բայց ինքեանք և հայել ՚ի նա ոչ կամին. կարասի որ ժողովէ, ասեն, մեզք են յոյժ, բայց զաղքատութիւն առաւել քան զյոյժ գովին. յարգեն զթշուառութիւն, և պարսաւեն զյաջողուածս. ծաղր առնեն զանուն բախտի, և զփառաւորութիւն յոյժ այգանեն. սիրեն զանշքութիւն հանդերձից, և յարգեն զանարգս քան զպատուականս. գովեն զմահ, և պարսաւեն զկեանս. անարգեն զձնունդս մարդոյ, և գովեն զանորդութիւն: Եւ եթէ լսէ ոք զոցս և ՚ի կանայս ոչ մերձենան, աշխարհի վախճան վաղվաղակի հասանէ:

Այլ ես ոչ կամեցայ զամենայն ըստ մասանց ընդ գրով արկանել առ ձեզ. զի բազում այն ինչ է, զոր խօսին դռքա: Որ չարագոյն եւս է քան զոր գրեցաքդ, զԱստուած ՚ի խաչելեալ ՚ի մարդկանէ քարոզեն, և զնոյն մեռեալ և թաղեալ, և ապա յարուցեալ և վերացեալ յերկինս: Մճահաձեղէն իսկ արժան էր անդրէն դատաստան առնել վասն այդպիսի անարժան ուսմանց: Գեւք որ չարք են, ոչ ըմբռնին և տանջին ՚ի մարդկանէ, թող թէ Աստուած արարիչ ամենայն արարածոց. զոր ձեզ ամօթ է ասել, և մեզ կարի անհաւատալի բանք: Արդ երկու իրք կան առաջի ձեր. կամ արարէք բան առ բան նամակիդ պատասխանի, և կամ արիք ՚ի դուռն եկայք, և յանդիման լերուք մեծի հրապարակին:

V. MOSIS CHORENENSIS hist. Armeniorum lib. I.
Cap. 10.

Յաղագս պատմութեանն Հայկայ.

Այս, ասէ, (ք Մար Աբաս Կատինայ) Հայկ գեղապատ- շած և անձնեայ, քաջադանդուր, խայտալին և հաստաբազուկ. սա ՚ի մէջ սկայիցն քաջ և երեւելի լեալ, ընդդիմակաց ամենեցուն, որք ամբառնային զձեռն՝ մշապետել ՚ի վերայ ամե- նայն սկայիցն և դիւցազանց: Սա խրոխտացեալ ամբարձ զձեռն ընդդէմ բռնաւորութեանն Բէլայ, ՚ի տարածանել ազգի մարդկան ընդ լայնութիւն ամենայն երկրի ՚ի մէջ բազ- մակոյտ սկայիցն, անհուն խօլաց և ուժաւորաց: Բանզի անդ մոլեգնեալ այր իւրաքանչիւր սուր ՚ի կողքնկերի իւրոյ ձգելով, ջանային ակրել ՚ի վերայ միմեանց. ուր պատահունք ՚ի դէպ ելանէին Բէլայ՝ բռնաեալ ունել զամենայն երկիր:

Որում ոչ կամեցեալ Հայկայ՝ հնազանդ լինել Ռէլայ, յետ
ճնանելոյ զորդի իւր զԱրմենակ ՚ի Ռաբելոնի, չու արարեալ
դնայ յերկիրն Արարադայ, որ է ի կողմանս հիւսիսոյ, հան-
դերձ որդւովք իւրովք և դստերօք և որդւոց որդւովք,
արամբք զօրաւորօք՝ Թուով իբրեւ երեքհարեւր, և այլովք
ընդոծնօք, և եկօք յարեցելովք ՚ինա, և բոլոր աղխիւ : Այր-
Թեալ բնակէ ՚ի լեռնոտին միում ՚ի դաշտավայրի, յորում սա-
կաւք ՚ի մարդկանէ յառաջագոյն ցրուելոցն գաղարեալ բնա-
կէին. զորս հնազանդ իւր արարեալ Հայկ, շինէ անդ տուն
բնակուԹեան կալուածոց, և տայ ՚ի ժառանգութիւն Ասդ-
մեայ որդւոյ Արմանեկայ : Այս արդարացուցանէ զանգիր
հին սոսացեալ զրոյցս :

Եւ ինքն խաղայ, ասէ, այլով աղխիւն ընդ արեւմուտս
հիւսիսոյ, գայ բնակէ ՚ի բարձրաւանդակ դաշտի միում. և ա-
նուանէ զանուն լեռնադաշտակին Հարք. այս ինքն, աստէն
բնակեալքս՝ աղգիտանն Թորգոմայ : Շինէ և գիւղ մի, և ա-
նուանէ յիւր անուն Հայկաշէն : Յիշէ և աստանօր պատմու-
Թիւնս. հարաւոյ կողմանէ դաշտիս այտրիկ առ երկայնա-
նստիւ միով լերամբ բնակեալ յառաջագոյն արք սակաւք՝
ինքնակամ հնազանդել գիւցաղինն : Արդարացուցանէ և
այս զասացեալ զրոյցս անգիրս :

VI. FAUSI BYZANTINI hist. Armeniorum lib. V.
cap. 7.

Յազադս մահուան Արշակայ Թագաւորին Հայոց, Թէ
զհարգ մեռաւ յերկրին խուժաստանի յԱնդմըշն բերդին ինք
ինքեամբ ձեռօք, և Գրստամստն էր պատճառք մահունն :

Այլ յայնմ ժամանակի դեռ տակաւին եւս կայր կենդանի Արշակ արքայ չայոց յերկրին իշխանութեն թագաւորութեն Պարսից ՚ի կողմանս իուժաստանի յՆիգմըն ընդդէն. այս ինքն որ անունն Անյուշն ընդդէն կոչեն: Աւ զայնու ժամանակաւ խաղաղացաւ պատերազմ տալ Պարսից ընդ չայս. զի արշակունին թագաւորն Քուշանաց, որ նստէր ՚ի Ռադիքաղաքի, նա յարոյց տալ պատերազմ ընդ սասանականին Շապուր և թագաւորին Պարսից: Աւ Շապուր թագաւորն զամ զգօրսն Պարսից գումարեալ խաղացոյց տալ պատերազմ ընդ նմա, և զորս միանգամաժեպէր գերութիւն յերկրէն չայոց զամ այրեձի գումարեալ խաղացոյց ընդ ինքեան. և զներքինին անգամ թագաւորին չայոց Արշակայ տանէր ընդ ինքեան ՚ի գործ պատերազմին:

Աւ էր ներքինի մի չայոց թագաւորին Արշակայ, ուտիկան հաւատարիմ լեալ, ներքինի սիրելի մեծի իշխանութի և մեծի պատուի, և անունն Գրատաման: Իսկ իբրեւ եղև պատերազմ ընդ թագաւորին Քուշանաց և ընդ թագաւորին Պարսից, չարաչար տարածէին զգօրսն Պարսից զօրքն Քուշանաց, և զբազումս կոտորեցին ՚ի զօրացն Պարսից զօրքն Քուշանաց, և զբազումս ձերբակալ արարին, և զկէս փակստականս հալածական առնէին: Իսկ Գրատաման ներքինին, որ յամս Տիրանայ թագաւորին չայոց և Արշակայ որդւոյ նորա թագաւորին չայոց լեալ էր իշխան տան գաւառին և հաւատարիմ գանձուց Անգեղ ընդդէն, և ամ ընդդացն արքունի՝ որ ՚ի կողմանս յայնս. սոյնպէս և յերկրին Օրփաց ՚ի Ռնաբեղ ընդդէն գանձքն լեալ էին ընդ նովաւ, և բարձնորա ի վեր քան զամ նախարարացն: Աւ քանզի այս գործակալութի և մարդպետութի, որում հայրն կոչէին ներքինեաց՝ գործ լեալ էր ՚ի ընէ ժամանակաց ՚ի թագաւորութեն արշակունոյ, և զայս Գրատամանն ներքինի զիշխանն զՆձեղ տանն գե-

բեալ տարեալ էր յերկիրն Պարսից 'ի ժամանակին՝ յորժամ կալան զԱրշակ արքայն Հայոց :

Եւ այս Գրատամատ էր յայնմ ճակատու, յարում վաթարեցին Քուշանքն զՇապուհ արքայն Պարսից : Եւ Գրատամատ դորժեաց անհարին քաջութիւն այնչափ կռուաւ ևս 'ի վերայ Շապուհոյ արքայի, և ապրեցոյց զնա 'ի մահուանէ. և բազումն 'ի Քուշանաց անափ կոտորեաց, և զբազում զախոյանից զգլուխս բերէր զառաջեալ : Եւ զՇապուհն թագաւորն Պարսից փրկէր 'ի նեղութիւն պատերազմին թշնամեաց անափ, ուր արդեւին զնա 'ի կուռն պատերազմին 'ի զօրաց անափ : Իսկ իբրև եղև յորժամ դարձաւ Շապուհն թագաւորն Պարսից յերկիրն Ասորեստանի, և մեծ շնորհակալութիւն առնէր ներքինւոյն Գրատամատայն վաստակոցն, և ասէր զնա Շապուհն թագաւորն Պարսից. ինդրեա՛ս զու ինչ յինէն. զինչ և ինդրեացես, տաց քեզ և ոչ արգելից : Եւ ասէ Գրատամատ ցթագաւորն. Ինձ 'ի քէն այլ ինչ ոչ պիտի, բայց սուր ինձ հրաման, զի երթայց տեսից զքեակ տէրն իմ զԱրշակ արքայ Հայոց : Եւ սս. մի օր, իբրև ես երթայց առ նա, հրաման սուր՝ արձակել զնա 'ի կապանացն, և ես իշխեցից լուանալ զգլուխ նորա և օծանել, և աղուցանել նմա պատմուճան, և արկանել նմա բազմականս, և զնել առաջն նորա խորտիկս, և սալ նմա գինի, և ուրախ առնել զնա արուեստականօքն մի օր ձիւղ : Եւ ասէ թագաւորն Շապուհն. Խիստ են ինդրուած քզ, զոր ինդրեցերդ. զի յաւուրց ժամանակայ՝ յարմէ թագաւորութիւս Պարսից կանկնեալ է, և բերդն այն Անյուշ բերդ կոչեցեալ է, չիք ոք մարդ կզեալ 'ի մարդկանէ՝ որ իշխեցեալ է յիշեցս ցաննել թագաւորաց զոր յայնմ բերդի եդեալ զօք է թագաւորաց՝ յիշելով զայն մարդ՝ որ յայնմ բերդի զօք եդեալ է, թող թէ զնա զայր թագաւոր և զնմ ընկեր կապեալ եդեալ յայնմ բերդի զհակառակորդն.

քան մինչ աշխատ արարեր զմեզ, և դու աւաղիկ զանձն 'ի մահ եղիր և յիշեցուցեր զԱնյուշն, որ ոչ էին լեալ երբէք օրէնք թագաւորութես Արեաց 'ի սկզբանէ: Բայց զի վասն՝ քո մեծ վաստակք են առ իս, զոր ինչ խնդրեցերն՝ երթ՝ տուեալ լիցի քեզ քայքեզ արժան էր զօգուտքո անձինդ խնդրել կամ աշխարհս կամ գաւառս կամ գանձս: Բայց յորժամ դու զայդ խնդրեցեր, անցեալ լիցիս զօրինօք Արեաց թագաւորութեանս. երթ, տուեալ լիցի քեզ որ ինչ յինէնս խնդրեցեր փոխանակաց քոց:

Աւ ետ նմա փուշտիպան մի հաւատարիմ: և հրովարտակ արքունի մատանեաւն, զի գնացեալ երթիցէ նա 'ի բերդն յԱնգամըն, և զհարդ և կամք իցէ նորա, զոր օրինակ և խնդրեացն արացէ կապելոյն Արշակայ, որ յառաջ թագաւորեալն էր 'ի Հայս: Աւ չողաւ Գրաստամանն հանդերձ փշտիպանաւն և հրովարտակաւն արքունի յԱնուշ բերդն, և ետես զտէրն բնակ, և արձակեաց զԱրշակ 'ի կապանացն երկաթեւ յի ձեռակապացն և յօտիցն երկաթոց և յանրոց պարանոցէն շղթայիցն սարեացն. և լուաց զգլուխ նորա, և լուպացոյց զանձն նորա: Աւ ազոյց նմա պատմուճան աղնիւ. և էարկ նմա բազմականս և բազմեցոյց զնա. և եդ առաջն նորա ընթրիս ըստ օրինաց թագաւորաց և եդ առաջն նորա գինի որպէս օրէն էր թագաւորացն. սթափեաց զնա, և մխիթարեաց, և ուրախ առնէր զնա զուսանօք:

Աւ 'ի ժամ աղանդեր մատուցանելոյ՝ եդին առաջն նորա մերդ, խնձոր և վարունգ և ամիճ, զի կերիցէ. և եդին դանակ նմա, որպէս զի հասցէ և կերիցէ զհարդ ե կամեսցի: Աւ Գրաստամանա մեծապէս ուրախ առնէր զնս. կայր յոտն, և մխիթարէր զնա: Իսկ յորժամ արբեցաւ, և գինին եկն զակամբ նորա, արբեցաւ հպարտացաւ և ասէ. Այլ ինձ Արշակայ. այսպէս և այս, և յայսմ չափու և այս անցք անցին ընդ

իս: Եւ զայս ասացեալ, զդանակն՝ զոր ունէր ՚ի ձեռինն, որով զմիրզն կամ զամիճն կամէր ուտել, եհար ՚ի սրտի իւրում: և անդէն սատակեցաւ, և մեռաւ անդէն ՚ի նմին ժամուն մինչ դեռ կայր ՚ի բազմականին: Իսկ յորժամ զայն ետես Պրաստամատն, յարձակեցաւ եհանն ՚ի նմանէ զնոյն դանակ, և եհար յիւրում կշտին. և անդէն մեռաւ և նա ՚ի նմին ժամուն յայնմ:

IOANNIS MANDACUNENSIS sermones. ed. Ven.
836. p. 209. sq. de amore.

Աստուած սէր է, ասէ որդին որոտման սիրելի աշակերտն Քրի Յովհաննէս. և որ կայ ՚ի սէրն յձժ բնակէ, և ձժ ՚ի նմա: Ես արդ եղբարք, լուարուք և ՚ի միտ առէք զճառս սիրոյ: Օ՛ի ամ որ սիրէ զձժ, սիրէ նա և զեղբայր իւր. զի սէրն նյ սիրով եղբօրն երևի: Օ՛ի թէ զեղբայրն զոր տեսանէ ոչ սիրէ, զձժ գոր ոչն տեսանէ զինրդ կարիցէ սիրել: Այսուիկ ճանաչեմք եթէ սիրեմք զձժ, յորժամ սիրեմք զեղբայրն մեր ըստ հոգւոյն սիրոյ և ոչ ըստ մարմնոյ: Օ՛ի այլ է սէր հոգւոյն և այլ մարմնոյն. զոր յառաջ գնացեալ ասացուք յիւրում տեղւոջն: Բայց արդ ամ որ սիրէ ճանաչի յայ, և ինքն ճանաչէ զձժ. և ամ որ ոչ սիրէ զեղբայր իւր ցաւակցաբար, օտար է յայ, ե զնորհս անգային ոչ կարէ ընդունել: Ամենայն որ սիրէ զեղբայր իւր ՚ի սուրբ սրտէ, բնակարտն լինի այ, և ձժ ՚ի նմա բնակէ: Օ՛ի ինքն տէրն սիրեաց զմեզ և առաքեաց զհոգին ճշմարտութե բնակել ՚ի մեզ: Օ՛ի իմանալի հոգիս մեր ընդ անիմանալի հոգւոյն նյ սիրով կապակցի. և որպէս նա սիրեաց զմեզ, նոյնպէս և ՚ի մէնջ կամի սիրել զմիմեանս:

Տես թէ որչափ համարձակութի ունի սէրն առ ձժ, որ-

պէս թէ նման այ առնէ զմարդն: Օ՛ր ան սիրովն իւրով նման մարդկան եղև, և եցոյց թէ մարդիկ իւրեանց սիրովն նման այ լինելոց են: Օ՛ր ան այնչափ սիրեաց զաշխարհս, մինչև զԱրդիւն իւր միածին առաքեաց ՚ի փրկութի աշխարհի. եթէ մեք սիրեսցուք զմիմեանս որպէս և սիրեաց ան զմեզ, ոչ ինչ է չար որ խափանէ զսէրն մեր: Ամենայն որ սիրէ, յայտնի է առաջի մարդկան և համարձակ առաջի այ. զի երկիւղ ՚ի մեզաց մահու ոչ ունի, այլ սիրովն այ զինեալ կայ, և անհայտ երկիւղական վտանգից: Ուր սէր է, անդ երկիւղ ոչ է. սրտէս և Յոհաննէս ասէ. «Երկիւղ ոչ գոյ ՚ի սէրն, այլ սէր կատարեալ ՚ի բաց մերժէ զերկիւղ»: Օ՛ր երկիւղ ընդ տանջանօք է, և սէր ՚ի համարձակութի. և զի երկիւղ հալածի ՚ի սիրոյ: Աւ ուր սէր ոչ է, անդ է երկիւղ դատաստանին, և ահ կորստեան յաւուր մեծի ահեղ ատենին: Իսկ սէր աներկիւղ առնէ զմարդ յամ տանջանաց: Այլ զայն ասեմ, որ ամենևին հեռի է յերկբայութենէ: Օ՛ր երկբայութի և սէր ՚ի միասին ոչ բնակէ. և գիտելի է զի սէրն ոչ միայն ՚ի կեանսն յաւիտենականս պողարերէ զպտուղ խաղաղուէ իւրոյ, այլ և յաշխարհիս յայսմիկ զամթշնամութի ՚ի բաց հալածէ, զնախանձ և զատելուի, զոխակալուի և զչարակնութի, զչարախօսութի և զհայհոյութի, զտրտունջ և զբամբասանս, զհպարտութի և զամբարհաւածութի, և մանաւանդ զմայրն ամ չարեաց զարծաթսիրութի և զագահութի:

Արդ որ զսէրն ունի, յայս ամ չարեացս ՚ի բաց հեռանայ, և յերկնային անքոյթ խաղաղական նաւահանգիստն ժամանէ յամենևին բարին: Օ՛ր և խաղաղական քան զսէրն՝ ազատ լինել յամ խռովութի, և զանային հաճոյսն կատարել: Այլ բանալի է արքայուէ երկնից և ճանապարհ կենացն յաւիտենից: Այլ զմարդիկ որդիս այ առնէ և երկնից արքայուէ ժառանգորդ: Այլ զատականացու բնութիւնս անս-

պական գործէ, զմահականացուս յանմահութենս զերափոխէ: Աէրն զերկրայինս երկնային տանէ, և զհոգեղէնս հրեղէն կազմէ: Աւ արդ ո՞վ կարէ պատմել զանչափ մեծութի սիրոյն, զի անճառ և անպատում է: Աստ որում և անեղ բնութիւն անմեծութեան տնքններէ է, այսպէս և բնութիւն սիրոյն: Աւ որպէս ան անբաւ է, բայց յամենեսինն մերձ է, և բնակեալ է ՚ի հեզս և ՚ի խոնարհս և յայնոսիկ՝ որ զողան ՚ի բանից նորա, այնպէս և սէրն յամենեսեան մերձ է, որ կամին զնա, և ինքն եկեալ բնակեսցէ ՚ի խնդրողս իւր: Վանզի սէրն սիրէ զսիրելիս իւր, և առէ ոչ զատելիս իւր: Ար խընդրեն զնա, մերձ է ՚ի նոստ անապէս. զի ան սէր է և կամեցող սիրոյ ՚ի սուրբ սրտէ և յանկեղծաւոր հաւատոց:

Gregorii Narekensis Commentarius in Canticum Cantorum. Prooemium p. 389. sqq. ed. Ven. 1827.

Հրամանք անասէր թագաւորութեդ, ո՞վ տէր արքայ, բուն և աւելի էր քան զկար մեր. զի այգպիսի խնդիր, մեկնել զերգ երգոց՝ այնոցիկ էր, որ ըստ Սողոմոնին է հոգւով: Օվ եթէ նիւսացին Վրիզոր, որ կատարեալ վարդապետ էր և հոգիաբնակ, ՚ի բուն կատարմանէ մեկնութի այսմ՝ զրոցս վերջացեալ գտանի, զորչափ ևս առաւել էս, որ ամենայնիւ տգէտ եմ և ունայն ՚ի հոգւոյն շնորհաց, ոչ կարացից հետեւել մտացն ասացելոց ՚ի սողոմոնեան հոգւոյն: Մանաւանդ զի չէ՛ փոքր զատապարտութի և պատիժք՝ զբանս սրբոց զրոց օտար մեկնութեք ազաւաղեալ՝ վասն ոչ տգէտ երեւելոյ, և փառամոլ հպարտութի՝ զոչէսն իբրև զճշմարիտ ցուցանել

Բայց զի հրամանս սենիւք հնազանդ լինել թագաւորաց հրամանաց, յանդգնիմասել զիմ' տկար մտացս հասողութի՛ն. յուսացեսալ ՚ի հողին սք՛, զնորայն կատարելով հրաման, որ ասաց, թէ հպատակ կացէք թագաւորաց :

Արդ նախ առաջին՝ խնդացի ընդ այս, որ այսպիսի միտս երևեցուցեր առ ՚ի քննել զգիրս, և հոգ ասնել ուսմանց, որ է գուշակ երկիրդն ա՛ն, և օտարանալոյ ՚ի պիղծ հոգւոց և ՚ի վայրագար քննութեց և ՚ի մեղաստեր բարույ՝ և այնմ երանութեց մօտաւորիլ, որ մարգարէն ասէ, թէ «Արանեալ է այր՝ որ ոչ գնաց ՚ի խորհուրդս ամբարշտաց», և որ զկնի՛ գայ: Որ և սակաւ ինչ յառաջ երթեալ ասէ, «Այլ յորէնս ան խորհեսցի նա ՚ի տուէ և ՚ի զիշերի»: Ապա զհատուցումն խորհուլայն զօրէնս ան ՚ի վերայ բերեալ ասէ, թէ «Աղբցի նա որպէս ծառ՝ որ անկեալ է ՚ի գնացս ջուրց»: Օ ՚ի որպէս ծառ՝ որ անկեալ է ՚ի գնացս ջուրց, անթարշամ է, նոյնպէս և որ զպատուիրանս ան քննէ, և այնմ հոգ տանի ՚ի տուէ և ՚ի զիշերի, այնպէս անթարշամ մնայ յայսմ՝ ՚ի կեանս. և զամենայն զոր ինչ առնէ, յաջողէ նմա ան: Որպէս Գաւթին իսկ յաջողեաց. զի այր թագաւոր էր, և այնչափ մեծ թագաւորն զպատերազմաց և զամենայն պիտոյից մարմնոյ հոգս առ ոտն հարեալ, զանյան և եթ խորհէր. վասն որոյ անպարտելի մնաց ՚ի թշնամեաց: Այնպէս և ՚ի Աղոմմիլ տեսէք, թէ քանի տխրեցերակալ թագաւոր էր. բայց հանապազորդեան հողք այն էր նորա, զոր յընթեանուլք էք. և այլ ևս այնչափ գրեան, զոր և աշխարհս չէր բաւական ՚ի բառնալ՝ եթէ մնացեալ էին գրեանն. բայց զի չէր աշխարհ արժանի, և չպիտէր որ ուսանէին մարգիկ, զայնպիսի անչափ զիտութիւն երարձ՝ անձ յերկրէ. զի զամենայն ինչ ՚ի զիտութի էր բերեալ, որ ինչ արարեալք էին ան ՚ի վերայ երկրի. և եթէ չէր զլլրեալ, այլ ևս մեծաց շնորհաց էր հասեալ: Արդ ընդ այնպիսին պարտ

